600.0027.13.02.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 փետրվարի 2019 թվականի N27Ն

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N275Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի հունիսի 15-ի «Փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» N275Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկայի՝

1) 1-ին պարբերությունում, հավելվածի N1 աղյուսակում և 2-րդ կետի 2-րդ ենթակետում «10» թիվը փոխարինել «30» թվով.

2) 1-ին պարբերությունում «2007 թվականի մայիսի 4-ի N 207-Ն» բառերը փոխարինել «2015 թվականի ապրիլի 22-ի N88Ն» բառերով, իսկ «1), 2) և 3)» բառերը «1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ» բառերով.

3) 1.3 կետի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

$$U = \frac{ԱՀ}{W}$$

որտեղ՝ W -ն առաքվող էլեկտրական էներգիայի քանակն է:».

4) 2.2 կետի 2-րդ ենթակետը ճանաչել ուժը կորցրած.

5) 2.4 կետից հանել «NN 1, 2, 3» թվերը.

6) 4.6 կետում «2004 թվականի մայիսի 12-ի N56-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգի» բառերը փոխարինել «2010 թվականի հուլիսի 14-ի N365Ն որոշմամբ հաստատված էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգի» բառերով.

7) հավելվածի 4-րդ կետում «դրվածքային» բառը փոխարինել «տեղակայված» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
13 փետրվարի 2019թ.